ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մարտի 1-ին, Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ուսանողները, գլխավորությամբ վերատեսչի և ընկերակցությամբ վերակացուների ու դասախոսներից մի քանիսի, այցելեցին մայրաքաղաքի Պատմական թանգարանը, Պետական պատկերասրահը, եղան աստվածաբանարանում և մի շարք այլ տեսարժան վայրերում։ Ուսանողներին մանրակրկիտ բացատրություններ էին տալիս վերատեսուչն ու դասախոսները։

Այդ օրը ուսանողները վերադարձան Էջմիածին իրենց միտքը հարստացրած նոր գիտելիքներով։ Նրանք Հոգևոր Ճեմարանում իրենց ձեռք բերած պատմության, արվեստի, գրականության վերաբերյալ գիտելիքները ավելի հիմնավոր և հաստատուն են դարձնում էքսկուրսիաների միջոցով, ուսումնասիրելով գիտության և արվեստի կենդանի փաստերը։

***

Մարտի 6-ին, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի և տեղական Սովետների ընտրությունների օրը, Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը և դասախոսական կազմը, սուրբ պատարագից հետո, գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի գլխավորությամբ, գնացին իրենց ընտրական տեղամասը։

Ընտրական տեղամասի մուտքի մոտ, ընտրական հանձնաժողովի անդամները ողջունեցին Մայր Աթոռի միաբաններին և ուսանողներին։ Ստանալով քվեարկության թերթիկները, միաբաններն ու ուսանողները քվեարկեցին ժողովրդի թեկնածուների օգտին։

Այդ օրը, Մայր Աթոռի ողջ միաբանությունն ու Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը, որպես Սովետական Միության լիիրավ քաղաքացիներ, իրենց ձայնը միացնելով սովետական բազմամիլիոն ազնիվ քաղաքացիների ձայնին, կատարեցին իրենց քաղաքացիական պարտքը Հայրենիքի և ժողովրդի հանդեպ։

***

Մարտի 13-ին, Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը, նախագահությամբ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի, նկատի առնելով այն հանգամանքը, որ Մայր Տաճարի ներսում ամեն կողմից սկսված վերանորոգման աշխատանքները անդադար շարունակվում են, որոշեց ժամանակավորապես, մինչև նորոգության ավարտումը, ժամերգությունը և սուրբ պատարագը կատարել Ս. Հռիփսիմեի վանքում։

***

Մարտի 15-ին, Երևանում, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի մեծ դահլիճում, տեղի ունեցավ Խաղաղության պաշտպանության ռեսպուբլիկական կոմիտեի ընդլայնված նիստը։ Նիստին հրավիրված էր նաև Հայ Եկեղեցու պատվիրակությունը։ Հայ Եկեղեցու պատվիրակությունը, նախագահությամբ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի և սրբազանին ուղեկցող գերապատիվ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի և բարձրապատիվ Տ. Գևորգ ծայրագույն վարդապետ Վաթյանի, նույն օրը ներկա եղավ խաղաղության պաշտպանությանը նվիրված նիստին։ Նիստի ընթացքում գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը, իր ելույթով, հիմնվելով Ս. Աթոռի աստվածային ճշմարիտ սկզբունքների վրա, ջատագովեց ժողովուրդների խաղաղության սրբազան գաղափարը։

Նիստից հետո, նույն օրը, Հայ Եկեղեցու ներկայացուցիչները վերադարձան Մայր Աթոռ։

***

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, ընդառաջելով Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սուրեն եպիսկոպոս Թորոսյանի խնդրանքին, ազատեց նրան առաջնորդական պաշտոնից և, բուժման նպատակով, որոշեց սրբազանին ուղարկել Ցխալտուբա բուժավայրը։

Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ նշանակվեց բարձրապատիվ Տ. Գևորգ ծայրագույն վարդապետ Վաթյանը, որն իր նոր պաշտոնատեղին մեկնեց նշանակումից անմիջապես հետո։

***

Մարտի 26-ին, Ս. Գրիգոր Լուսավորչի շարաթանց և վիրապամտի տոնի օրը, Ս. Հռիփսիմեի վանքում, հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ, մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Օրվա պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը։

***

Մարտի 29-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց խաղաղության միջազգային մրցանակի լաուրեատ, բրազիլիական կոմպոզիտոր, դիրիժյոր Կլաուդիո Սանտորուն, որը գտնվում էր Երևանում։

Հարգարժան հյուրին լավագույն ընդունելություն ցույց տրվեց Մայր Աթոռի միաբանության կողմից։ Մայր Տաճարի ավագ լուսարար գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը մանրամասն բացատրություններ տվեց հյուրին հնադարյան Տաճարի, նրա շինության, ժամանակի, ճարտարապետության և կատարվող վերանորոգությունների վերաբերյալ, միաժամանակ բավարարելով հարգարժան հյուրի հարցասիրությունը։

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին ՌՍՖՍՌ վաստակավոր արտիստ, Համամիութենական ռադիոյի մենակատար Վլադիմիր Բունչիկովը և Մոսկվայի պետական ֆիլհարմոնիայի մենակատարուհի Վիկտորիա Իվանովան։ Մայր Աթոռի միաբանության կողմից հյուրերին ցույց տրվեց պատշաճ ընդունելություն։

Հյուրերը, գոհունակությամբ թողնելով Մայր Աթոռը, վերադարձան Երևան։

***

Գերագույն Հոգևոր Խորհուրդը որոշել է առաջիկա ապրիլ ամսին վերանորոգման աշխատանքների ձեռնարկել Գեղարդի, Օշականի, Բջնիի և Խոր Վիրապի վանքերում։

Վերանորոգման պետք է ենթարկվի նաև Ս. Հռիփսիմեի վանքի բնակելի շենքը։

Արդեն վերանորոգվել են Ս. Գեղարդի վանքի վանահոր, քահանայից և ուխտավորների բնակարանները։

Լրիվ վերանորոգման է ենթարկվել Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ եկեղեցին։

***

Մարտ ամսվա ընթացքում, Երևանից և Սովետական Միության այլևայլ քաղաքներից Ս. Էջմիածին այցելեցին բազմաթիվ դպրոցականներ։ Նրանք, իրենց գարնանային արձակուրդները ավելի բովանդակալից անցկացնելու նպատակով, կազմակերպել էին էքսկուրսիաներ դեպի պատմական հուշարձանները։